ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

Երևան-0010, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ԻՔՍ-ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասը և ուսումնասիրելով ՀՀ վարչապետի աշխատակազմի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված «ՎԱԲՏ-ԳՀԱՇՁԲ-24/21» ծածկագրով գնման ընթացակարգին վերաբերող փաստաթղթերը՝ ստորև ներկայացնում եմ «ԻՔՍ-ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) (ՀՎՀՀ 06971693) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ որոշումը.

Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կարիքների համար շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով վարչապետի աշխատակազմի կողմից հայտարարվել է «ՎԱԲՏ-ԳՀԱՇՁԲ-24/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցության հայտ է ներկայացրել «ԻՔՍ-ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՓԲԸ-ն:

«ՎԱԲՏ-ԳՀԱՇՁԲ-24/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 02.11.2023թ. կայացած նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ մասնակիցների կողմից Armeps (www.armeps.am) էլեկտրոնային համակարգ մուտքագրած հայտերում հրավերով պահանջվող փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան, բացառությամբ «ԻՔՍ-ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՓԲԸ-ի, որի ներկայացրած ծավալաթերթ-նախահաշվում առկա են թվաբանական աճշտություններ:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի (այսուհետ՝ կարգ) 41-րդ կետը՝ Հանձնաժողովի նիստը կասեցվել է և

հայտերի բացման օրը (31.10.2023թ.) ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից Armeps էլեկտրոնային համակարգի միջոցով հաղթող մասնակցին ուղարկվել է անհամապատասխանության շտկման վերաբերյալ ծանուցումը: Մասնակիցը սահմանված ժամկետում ներկայացրել է փաստաթղթի շտկված տարբերակը, որը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է բավարար:

Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել «ԻՔՍ-ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՓԲԸ-ին՝ որպես բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից, և հաստատել գնանշման հարցման ընթացակարգով պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

Ըստ այդմ, Հանձնաժողովը որոշել է՝ պայմանագիր կնքելու նպատակով ընթացակարգի ընտրված մասնակցին անգործության ժամկետի ավարտից հետո ծանուցել պայմանագրի նախագիծը և առաջարկել 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի կատարման ապահովում՝ գնման գնի 10 (տասը) տոկոսի չափով և որակավորման ապահովում՝ գնման գնի 15 (տասնհինգ) տոկոսի չափով, որոնց ներկայացնելուց հետո սահմանված կարգով կկնքվի պայմանագիր:

Ս.թ. նոյեմբերի 24-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրությամբ Հանձնաժողովն արձանագրել է, որ ընտրված մասնակցի կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել պայմանագիրը, ինչի արդյունքում Հանձնաժողովը որոշեց՝ «ՎԱԲՏ-ԳՀԱՇՁԲ-24/21» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած՝ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն, ինչպես նաև նախաձեռնել գործընթաց՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» պարբերության համաձայն «ԻՔՍ-ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Միաժամանակ, 27.11.2023թ. www.gnumner.am կայքում պատվիրատուն հրապարակել է «ՎԱԲՏ-ԳՀԱՇՁԲ-24/21» ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի և (կամ) որակավորման ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել ապահովումը: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի և (կամ) որակավորման ապահովումը:

Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո ***օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետում չի ստորագրում պայմանագիրը*** կամ պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի և (կամ) որակավորման ապահովումը, իսկ կնքվելիք պայմանագրով կանխավճար նախատեսված լինելու դեպքում՝ նաև կանխավճարի ապահովումը, ***ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:***

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, ***եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:***

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Նույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին:

Հաշվի առնելով վերը շարադրված իրավանորմերը և փաստացի հանգամանքները՝ պատվիրատուն արձանագրում է, որ «ԻՔՍ-ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՓԲԸ-ն՝ ճանաչվելով «ՎԱԲՏ-ԳՀԱՇՁԲ-24/21» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում ընտրված մասնակից՝ սահմանված ժամկետում չի ներկայացրել իր կողմից ստորագրած պայմանագիրը և դրանով իսկ ***զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից***:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ առկա են «ԻՔՍ-ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՓԲԸ -ին՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» պարբերությամբ նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը, և որոշում եմ՝ «ԻՔՍ-ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՓԲԸ-ին ներառել նշված ցուցակում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ

ԳԱՐԻԿ ԲՈՇՅԱՆ